- Staatliches historisches Zentralarchiv der Republik Armenien, Fonds 57, Liste 1, Werk 4, Nr. 1
- Staatliches historisches Zentralarchiv der Republik Armenien, Fonds 57, Liste 1, Werk 4, Nr. 4.
- Staatliches historisches Zentralarchiv der Republik Armenien, Fonds 319, Liste 1, Werk 5, Nr. 23–28.
- Staatliches historisches Zentralarchiv der Republik Armenien, Fonds 468, Liste 2, Werk 73, Nr. 1.
- Tēr-Movsisean, M., Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծինի և Դադի եկեղեցիները և վանական շինությունները Haykakan erek' mec vank'eri Tat'evi, Hařarcini, ev Dadi ekelec'inerə ev vanakan řinut'yunnerə (Kirchen und Klosterbauten von drei armenischen Klöstern: Tatev, Haghartsin und Dadi, Jerusalem 1931).
- Xorenac'i, Movsēs, Աշխարհացոյց Aşxarhac' oyc' (Weltkarte), siehe in: Մատենագիրք Հայոց Matenagirk' Hayoc' (Armenische klassische Autoren), Bd. 2, Einleitung von P. Muradean und K. Yuzbashean, Antelias 2003.

Autorin

Tamara Minasyan, PhD

Wissenschaftliche Mitarbeiterin, Mesrop-Maschtoz-Institut für alte Manuskripte (Matenadaran),
Jerewan, Armenien, minasyan.tamara64@mail.ru

Übersetzerin: Anahit Avagyan



Abb. 1: M 3578, Grigor Tatevazi, Kommentar zum Matthäusevangelium, Datierung: 1402, Schreibort: Karwajar, Schreiber: Tuma, Stifter: Priester Hunan, Fol. 4a Halbbogen (Titelseite) und Randverzierung. © Mesrop-Maschtoz-Institut für alte Manuskripte (Matenadaran) / Մկ. 1 - ձև. 3578, Գրիգոր Տաթևացի, Մաթևոսի ավետարանի մեկնություն, 1402 թ., գյուղ Քարվաճառ, գրիչ Թումա Սյունեցի, ստացող Հունան քհն. թ. 4ա կիսախորան և լրասանցազարդ: © Մ. Մաշտոցի անվան Մատենադարան:




Abb. 2: M 3578, Grigor Tatevazi, Evangeliumkommentar, Datierung: 1402, Schreibort: Karwajar, Schreiber: Tuma, Stifter: Priester Hunan, Fol. 178a Frontispitz, Vogelverzierung. © Mesrop-Maschtoz-Institut für alte Manuskripte (Matenadaran) / ՄԼԿ. 2 - ձեռ. 3578, Գրիգոր Տաթևացի, Մաթևոսի ավետերանի մեկնություն, 1402 թ., գյուղ Քարվաճառ, գրիչ Թումա Սյունեցի, ստացող Հունան քհն., թ. 178ա ճակատագրող և թղթագրող: © Մ. Մաշտոցի անվան Մատենադարան:




Abb. 3: M 3578, Grigor Tatevazi, Evangeliumkommentar, Datierung: 1402, Schreibort: Karwajar, Schreiber: Tuma, Stifter: Priester Hunan, Fol. 296b Kolophon des Schreibers. © Mesrop-Maschtoz-Institut für alte Manuskripte (Matenadaran) / ՄԿ. 3 - ձեռ. 3578, Գրիգոր Տաթևացի, Մաթնոսի պատերազմի մեկնություն, 1402 թ., գրող Քարվաճառ, գրիչ Թուման Սյունեցի, ստացող շուման քհն., թ. 296բ Հիշատակարան: © Մ. Մաշտոցի անվան Մատենադարան:




Abb. 4: M 3578, Grigor Tatevazi, Evangeliumkommentar, Datierung: 1402, Schreibort: Karwajar, Schreiber: Tuma, Stifter: Priester Hunan, Fol. 297a Fortsetzung des Kolophons. © Mesrop-Maschtoz-Institut für alte Manuskripte (Matenadaran) / Մկ. 4 - ձեռ. 3578, Գրիգոր Տաթևացի, Մաթևոսի ավետարանի մեկնություն, 1402 թ., գյուղ Քարվաճառ, գրիչ Թումա Սյունեցի, ստացող Հունան քհն., թ. 297ա շիշատակարանի շարունակություն: © Մ. Մաշտոցի անվան Մատենադարան:

Թամարա Մինասյան

Արցախի Քարվաճառ բնակավայրը XV դ. հայերեն ձեռագիր հիշատակարանում

Պատմական Արցախ աշխարհի ծար գավառի¹ բնակավայրերից է Քարվաճառ գյուղը,² որը տարածված է Թարթառ գետի ձախակողմյան մի բարձրադիր սարահարթի վրա: Արդեն XX դարում քաղաքի կարգավիճակ ունեցող նախկին միջնադարյան գյուղը հայտնի է նաև Քելբաջար անունով՝ պայմանավորված այստեղ բնակեցված քոչվոր ցեղերի լեզուներով:

Տեղանունների բառարանում Քարվաճառ բնակավայրի և համանուն լեռան վերաբերյալ ամփոփված են մի քանի բառհոդվածներ, որոնց համաձայն՝ բնակավայրը հիշատակվում է որպես գավառակ Մեծ Հայքի Արցախ աշխարհում, ավելի ուշ՝ ավան ԼՂՔ Քաշաթաղի շրջանում, ապա՝ Արցախի Հանրապետության կազմում քաղաքատիպ ավան և Քելբաջարի շրջանի կենտրոնը,³ որը

-
- 1 Միջնադարում պատմական Արցախ աշխարհի ծար գավառը կամ ծարա երկիրը, որ XII-XIII դարերից հայտնի է նաև Վերին Խաչեն անունով, համապատասխանում էր «Աշխարհացույցյան» Վայկունիք գավառին, որը Մեծ Հայքի Արցախ նահանգի տասներկու գավառներից մեկն էր: Վաղ միջնադարում նրա սահմանները տարածվում էին արևելքում Ռմբոստյան լեռնաշղթայով, հյուսիսում Մոսվի լեռնաշղթայի հյուսիսային լանջերով, հարավում՝ Աղահեջքի (Քաշաթաղ) լեռնաշղթայով, իսկ արևելքում ընդգրկում էր Դադիվանքը, Հավթախաղաց սարն ու Խաղալանքը: Գավառի տարածքում էր «Բաղանիք արքունականքը» կամ «Վայկունիք ջերմուկքը»: Տես Խորենացի, Աշխարհացույց, 217: Երենյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, 82: XVIII դարից գավառը կոչվում էր նաև Քոլանի՝ կապված այստեղ ներթափանցած քրդական ծագմամբ քոլանի ցեղի հետ: Տես Սիմեոն Երևանցի, Չամբր, 283:
 - 2 Միջնադարում գյուղ համարվող Քարվաճառը 1920 թ. հետո ուներ շրջանի կարգավիճակ: Երբ շրջանը բռնակցվեց Ադրբեջանին, այստեղ ձևավորվեց թուրքական արտասանությամբ Քյալբաջարի վարչական շրջանը, որի ենթակայության տակ մինչև XX դարի 90-ական թթ. սկիզբը կային 122 մեծ և փոքր գյուղեր: Պատմական հայկական Քարվաճառ գյուղը դարձավ քրդերով բնակեցված վարչական շրջանի կենտրոնը: 1923 թ. կազմավորվեց վարչական նոր միավորում՝ Կարմիր Քուրդիստանի գավառը, որի մեջ ներառվեցին Հայաստանի Խորհրդային Հանրապետության Չանգեզուրի գավառից և Լեռնային Ղարաբաղից կտրված տարածքները, որտեղ կազմավորվեցին Քյալբաջարի (Քարվաճառ), Լաչինի (Բերձոր) և մասամբ Ղուբաթլուի (Որոտան) գավառները: 1929 թ. Կարմիր Քուրդիստանը վերացվեց և տարածքը միացվեց Խորհրդային Ադրբեջանին: 1960-ական թվականներից ադրբեջանական իշխանությունները հսկայական ներդրումներ կատարեցին շրջանում, աճեց նաև ադրբեջանական բնակչության թիվը: Քարվաճառը Ադրբեջանի իշխանությունների կողմից ստացավ քաղաքատիպ ավանի, իսկ 1980 թ.-ից՝ քաղաքի կարգավիճակ: 1993 թ. Քարվաճառի ազատագրումից հետո բնակավայրը ներառնվեց Արցախի Հանրապետության կազմում և կրկին բնակեցվեց հայերով: 2020 թ. հայ-ադրբեջանական պատերազմի հետևանքով Քարվաճառի շրջանը կրկին հայաթափվեց և նոյեմբերի 25-ից անցավ Ադրբեջանի զինված ուժերի վերահսկողության տակ:
 - 3 Ըստ Արցախի Հանրապետության վարչատարածքային բաժանման Քարվաճառը համարվում է 1993 թ. հետո կազմավորված Նոր Շահումյանի (Քարվաճառ) շրջանի վարչական կենտրոնը, իսկ ըստ Ադրբեջանի վարչատարածքային բաժանման Քելբաջարի շրջանի վարչական կենտրոնը: Տես Դահրամանյան, Տեղեկատու:

համապատասխանում է միջնադարում վկայված Քարավաճառ գյուղին, իսկ լեռը տարածվում է քաղաքատիպ ավանի հյուսիսարևմտյան կողմում՝ արևելյան Սևանի լեռնաշղթայի ճյուղավորություններում:⁴

«Քարվաճառ» տեղանվան տարբեր բացատրություններ են տրվել, որոնք ցայսօր էլ մնում են ենթադրությունների շրջանակներում և կարիք են զգում գիտական լուրջ հիմնավորման: Ըստ ժողովրդական մեկնաբանության՝ այն նշանակել է «քար վաճառելու վայր»:⁵ Այս մեկնաբանությունն, իհարկե, հեռու է գիտականությունից և մնում է սիրողական բացատրության շրջանակներում: Ըստ Հովհաննես Կարազյոզյանի՝ հավանական է, որ «Քարվաճառ» տեղանունն առաջացել է Հին Արևելքում տարածված «քար» բառից, որ նշանակել է «գաղութ» կամ «ավան»: Մման տեղանուններ հանդիպում են Բաբելոնում (ինչպես՝ Քար-Դունիաշ), Մարաստանում (ինչպես՝ Քար-Ռեիգալի, Քար-Բաշշի), Ասորեստանում (ինչպես՝ Քար-Նիհնիլի, Քար-Շամասնասիր, Քար-Թուքուլթի-Նինուլթա):⁶ Իսկ հուշարձանագետ Սամվել Կարապետյանի համոզմամբ՝ «քարվաճառ» բառի մեկնաբանությունը պետք է փնտրել հայկական իրականության մեջ և կապել այն բանի հետ, որ Հայկական լեռնաշխարհում շատ բերդերի անվան բաղադրիչ մաս է կազմում «քար» բառը, որը համարժեք է «բերդ», «ամրոց» բառերին, ինչպես օրինակ, Քարհեղձ բերդը Ջակամ գավառում, Քար Մանակերտ և Քար Ամյուկ բերդերը՝ Վասպուրականում, Դեղնաքարը և Սարվանդիքարը՝ Կիլիկիայում: Սկսած ունենալով, որ Քարվաճառ բնակավայրի տեղանքն ունի միջնադարյան բերդերին խիստ բնորոշ բոլոր պայմանները (դժվարամատչելիություն, գաղտնուղի ձոր-ճանապարհով, ջրի առկայություն, հսկողություն պահապաններով), Ս. Կարապետյանը ընդունում է, որ Քարվաճառ տեղանվան ծագումը պայմանավորված է նրա բերդ լինելու հանգամանքով:⁷ Ի միջի այլոց, Քարվաճառը տարածաշրջանի համար ունի ռազմավարական նշանակություն, ինչին ակամատես եղանք վերջին Արցախյան պատերազմների ժամանակ:

Միջնադարյան Քարվաճառ գյուղի մասին սկզբնաղբյուրները չափազանց սակավաթիվ տեղեկություններ են հաղորդում: Չնայած գավառը, որի կազմի մեջ մտնում էր գյուղը, Վայկունիք, ծար կամ վերին Խաչեն անվանումներով մատենագիր աղբյուրներում, ձեռագիր հիշատակարաններում և վիմագիր արձանագրություններում հանդես է գալիս ավելի վաղ ժամանակներից, այնուամենայնիվ, Քարվաճառ տեղանունն առաջին անգամ հիշատակվում է 1402 թ. գրված մի ձեռագիր հիշատակարանում՝ իբրև գյուղ և գրչության կենտրոն: Այս

Աղբյուրների Հանրապետության պետական վիճակագրական կոմիտե, «Արցախյան տարածքային բաժանման ղասակարգում 2019»:

4 Հակոբյան/Մելիք-Բախչյան/Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 332 և 340:

5 Կարապետյան, Հայ մշակույթի հուշարձանները, 51:

6 Կարազյոզյան, Հակահայկական սեպը և նրա չորս շրջկենտրոնները, 5:

7 Կարապետյան, Հայ մշակույթի հուշարձանները, 52:

ձեռագիր մատյանը պահվում է Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում և կրում է 3578 թվահամարը: Քարվաճառը երկրորդ անգամ, ի թիվս ծար գավառի մի շարք գյուղերի, հիշատակվում է 1661 թ. մի վավերաթղթում. «[...] գիւղօրայքս Հաճաւ, Բօրու, Քարվաճառ, Գոմէրն, Չուար»,⁸ իսկ 1873 թ. մի կալվածագրում Քարվաճառը հիշատակված է որպէս Դադիվանքի վանքապատկան կալվածք: Նկատենք, որ տակավին 1830-ական թվականներից Բաղրասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանի երկարատև ու տքնաջան աշխատանքի շնորհիվ Դադիվանքին ենթակա երբեմնի կալվածքները դատական կարգով վերցվեցին այստեղ բնակվող քոչվոր ցեղերից և վերադարձվեցին վանքին՝ պահպանելով նրա կալվածատիրական իրավունքները:⁹ Չնայած դրան՝ խորհրդային կարգերի հաստատումով Դադիվանքը զրկվեց իր կալվածքներից, իսկ պատմական ծար գավառը, որ մտել էր 1923 թ. կազմավորված Կարմիր Քուրդիստան վարչատարածքային միավորման մեջ, 1929 թ. վերացվեց և բռնակցվեց Ադրբեջանին՝ Քելբաջար անունով:¹⁰

Քարվաճառ գյուղից մեզ հասած ձեռագրի գրիչը Թումա Սյունեցին է, որը 1402 թ. Հունան քահանայի խնդրանքով ընդօրինակում է Գրիգոր Տաթևացու Մատթեոսի Ավետարանի մեկնությունը: Մատյանը թղթյա է, 18x12,5 մեծությունը, դրոշմազարդ շագանակագույն կաշվե կազմով: Գրիչը գրել է գեղեցիկ ու կանոնավոր բոլորգրով: Հավանաբար, նկարագարողումը նույնպես կատարել է գրիչը: Այն հարուստ չէ. ունի մեկ կիսախորան, բազմաթիվ ճակատազարդեր, թռչնային և բուսական լուսանցազարդեր, թռչնագիր և հանգուցագիր զարդագրեր (տե՛ս [նկար 1](#) և [2](#)): Մատյանը գրվել է Հայոց Կարապետ Ա Կեղեցի (1393-1404) և Աղվանից Կարապետ (1402-1420) կաթողիկոսների հայրապետության տարիներին: Այս ժամանակ ծար գավառի արքեպիսկոպոսն ու Դադիվանքի առաջնորդն էր տեր Ջաքարիան:

«Գրեցաւ գիրքս այս աստուածաշունչ, որ ունի ամբարեալ առ ինքն զմեկնութիւն բանից Աւետարանին և կոչի քաղուածու զլիսոյն Մատթեոսի սուրբ աւետարանչի: Նաև ունի ընդ ինքեան զլուծումն չորից զլիսոցն, զոր բազում աշխատութեամբ ժողովեալ է մեծ ռաբունոյ և տիեզերալոյս հռետորի Գրիգորի՝ աշակերտի եռամեծին Յովհաննու Որոտնեցոյ: Եւ կատարեցաւ սա ի թուականութեանս հայկազեան տամարի ութ հարիւրերորդի յիսներորդի առաջնորդի ամի (1402) ի հայրապետութեան Հայոց և Աղուանից երկուցունց տերանց Կարապետք կոչեցելոց, զոր այսպես պատահեցան ի մերումս ժամանակի, անուանակիցք զոլ միմեանց, և յարհեպիսկոպոսութեան այսմ նահանգիս՝ տէր Ջաքարիայի՝

8 ՀՀՊԿԱ, ֆ. 57, ց. 1, գ 4, թ. 4:

9 ՀՀՊԿԱ, ֆ. 468, ց. 2, գ 73, թ. 1:

10 Քարվաճառի շրջանը արևելքից սահմանակից է Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանին, հարավից՝ Քաշաթաղին (Լաչին), արևմուտքից ՀՀ Վարդենիսի և հարավարևմուտքից՝ Վայքի և Սիսիանի շրջաններին, հյուսիսից՝ Ադրբեջանի տիրապետության տակ անցած Դաշքեսանի և Խանլարի շրջաններին: Կարապետյան, Հայաստանի պատմություն. Մոավականք, 209:

Դադիվանուց վերատեսչի, ի հռչակաւոր երկիրս Ծար՝ ի գւնս Քարավաճառ՝ ընդ հովանեաւ սրբոցս, որ ի սմայ, ձեռամբ մեղսամակարթ և անարհեստ գրչի՝ Թումայի Սիւնեցոյ՝ ի խնդրոյ պատուական և սրբասնեալ կուսակրան քահանայի Յունանու» (ՄՄ ձեռ. 3578, թ. 296բ: Տես նկար 3):

Հիշատակարանի շարունակության մեջ Թումա գրիչը տալիս է ուշագրավ մի կենսագրական տեղեկություն՝ Տաթևի համալսարանում ուսանած, Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու աշակերտ, նշանավոր մեկնիչ և մանկավարժ Մատթեոս Ջուղայեցու վերաբերյալ: Թումա գրիչը գրում է, որ Մատթեոսը, որ առանձնանում էր իր վարդապետական ու փիլիսոփայական խոհեմությամբ և ախոյան էր հերձվածողաց, մատյանի գրչության թվականին, այսինքն՝ 1402-ին, Գրիգոր Տաթևացու հաճությամբ և Տաթևի համալսարանի աշակերտների խնդրանքով նստում է «յաթոռ տէլէտութեան», այսինքն՝ դառնում է նշանավոր վարդապետներից մեկը:

«Ունելով որդի հարազատ և ժառանգ վարդապետութեան իւրոյ, զծաղկեալն ամենայն բարութեամբ և զարդարեալն ամենալի շնորհիվ, վարդապետական խոհեմութեամբ և փիլիսոփեական արհեստիւ, զսխոյեանն ընդդէմ հերձուածողաց՝ վարդապետն Մատթեոս, որ յայսմ ամի, կամակցութեամբ Սուրբ Հոգոյն և Զանիւ մեծ վարդապետին Գրիգորի և աղաչանաւք գրոց աշակերտեալ անձանց, նստաւ յաթոռ տէլէտութեան» (թ. 297ա: Տես նկար 4):

Հավելենք, որ Մատթեոս Ջուղայեցու կենսագրական այս դրվագը հիշատակելիս, մասնագետները հիմնվում են Թումա Սյունեցու հաղորդած տվյալի վրա:¹¹

Գրիչ Թուման հիշատակարանի վերջում խնդրում է հիշել ձեռագրի պատվիրատու Հունան կրոնավորի ծնողներին և բոլոր արյունակից հարազատներին, իսկ խոշոր գրի ու սխալների համար անմեղադրություն է խնդրում:

Ահա այն ամբողջ տեղեկությունը, որ տալիս է մեզ ձեռագրի հիշատակարանը: Ամենից կարևորը և արժեքավորը մեզ համար հիշատակարանում այն է, որ այստեղ պահպանված են գրչի անունը, գրչության ստույգ թվականը և, իհարկե, գրչության ստույգ վայրը: Վերջինս հիշատակված է «Քարավաճառ» ձևով: Թուման մատյանն ընդօրինակել է Քարավաճառ գյուղի եկեղեցում, ինչպես ինքն է ասում, «տեղի սրբերի հովանու ներքո»: Գրիչն այլ մանրամասներ չի հաղորդում, չի հիշատակվում, թե խոսքը որ սրբավայրի մասին է: Ցավոք, եկեղեցու վերաբերյալ այլ աղբյուրներում ևս չեն պահպանվել գրավոր կամ հնագիտական տեղեկություններ, անհայտ են մնում նրա և՛ անունը, և՛ հիմնադրվելու ժամանակը: Եկեղեցու անվան և հիմնադրվելու ժամանակի վերաբերյալ որևէ փաստ չեն արձանագրել նաև

11 Խաչիկյան, Մատթեոս Ջուղայեցու կյանքն ու մատենագրությունը, 62:

գավառի տարածքում կատարված ուսումնասիրությունները:¹² Այստեղ բախվում ենք դժվարությունների, որովհետև եկեղեցու և գյուղի վերաբերյալ միջնադարյան գրավոր սկզբնաղբյուրները չափազանց ժլատ են, ինչի հետևանքով էլ ասելիքը թեական ու կցկտուր է լինում: Ուստի, այս հույժ կարևոր և, ըստ էության, գյուղի և արբավայրի մասին եզակի տեղեկության հեղինակը մնում է Թումա Սյունեցին: 1402 թ.-ից մեզ հասած այս հիշատակարանը, որը ստույգ տեղեկություն է Քարվաճառ գյուղի տեղադրության վերաբերյալ, լիովին ապացույց է, որ Քարվաճառը պատմական Արցախի ծար գավառի մեջ մտնող և Դաղիվանքի ենթակայության տակ գտնող հայաբնակ գյուղ է եղել և մյուս գյուղերի հետ կիսել է գավառին վերահասած ճակատագիրը:

Ընդհանրապես, Քարվաճառի շրջանի տարածքում եղած պատմամշակութային հուշարձաններից շատերի մասին չափազանց քիչ տեղեկություններ են պահպանվել, կամ գրեթե տեղեկություններ չկան, քանի որ այդ հուշարձանների մեծ մասը այլևս գոյություն չունի այն պարզ պատճառով, որ ծար գավառում մահմեդական տարրերի բնակեցմամբ ադրբեջանական իշխանությունների հովանավորությամբ, հատկապես խորհրդային տարիներին, հայկական մշակութային արժեքների ծրագրավորված ոչնչացում է տեղի ունեցել:¹³ Պատմամշակութային այդ հուշարձաններից շատերը, դառնալով այբանացման զոհ, ավերվել ու ամայացել են այնպես, որ հայկականության հետքն իսկ չի պահպանվել, իսկ քանդված հուշարձանների քարերն էլ գործածվել են այլ շինությունների մեջ որպես շինաքար: Շրջանի ազատագրումից հետո հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության արշավախմբի

12 Գավառի տարածքում առաջին ուսումնասիրությունները կատարվել են XVIII դարում: Առաջին ուսումնասիրողը Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանն է, որը 1718 թ. խնամքով հավաքել ու ամբողջացրել է Գանձասարի, Խաղավանքի, Դաղի ու շրջակա տարածքի վանքերի ու խաչքարերի արձանագրությունները: Եսայի կաթողիկոսի կազմած հիշյալ արձանագրությունների տետրակի գտնվելու վայրն անհայտ է: Ստեփանաբանում են պահվում բնօրինակից կատարված երեք ընդօրինակությունները՝ 4537, 7821 և 9923 ձեռագրերը: 1830-ական թթ. Դաղի և Գետամիջի վանքերում մի քանի արձանագրություններ է գրի առել Հովհաննես եպս. Շահխաթունյանը (Շահխաթունեանց, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ զաւառացն Արարատայ, 356–365): Ծար գավառի բնակավայրերում վիմագրական ուսումնասիրություններ են կատարել Սարգիս արք. Ջալալյանը (Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հ. Ա, 199–227 և հ. Բ, 213–228), Խաչիկ վրդ. Դաղյանը (ՀՀՊՊԿԱ, ֆ. 319, ց. 1, գ. 5, թ. 23–28), Մակար եպս. Բարխուդարյանը (Բարխուդարեանց, Արցախ), Մեսրոպ Տեր-Մովսիսյանը (Տեր-Մովսիսեան, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծինի և Դաղի եկեղեցիները, 83–104): 1960–1964 թթ. Սեդրակ Բարխուդարյանի զիտավորած գիտական արշավախումբը Քարվաճառի շրջանում հնագիտական պեղումներ է իրականացրել (Դիվան հայ վիմագրության, Արցախ, 197–227): 1978–2018 թթ. Քարվաճառի շրջանում պարբերաբար հնագիտական ուսումնասիրություններ են կատարել Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի (1993–2005 թթ., արշավախմբի ղեկավար՝ Հ. Սիմոնյան) և Հայաստանի ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության մասնագետների կողմից (1978–1987 թթ., 1993–1996 թթ., 2000-ական թթ., արշավախմբի ղեկավար՝ Ս. Կարապետյան): Տե՛ս Սիմոնյան/Սանայան/Գեունի, Արցախի և ազատագրված տարածքների 1990–2005 թթ. հնագիտական հետազոտությունների հիմնական արդյունքները: Կարապետյան, Հայ մշակույթի հուշարձանները: Կարապետյան, Հայաստանի պատմություն. Մոավսկանք:

13 1924 թ. գավառի մի շարք բնակավայրերում հնագիտական ուսումնասիրություններ կատարած ռուս հնագետ Ե. Պլյոլինան բնակելի քարայրերի, ավերակված գյուղերի, բերդապարիսպների, եկեղեցիների ու մատուռների մասին ցավալիորեն նշում է, որ դրանց մեծ մասը ոչ միայն չեն հետազոտվել, այլև չեն նշվել գրականության մեջ, թեև ու՛՛՛ հաշվառման կարգով: Տե՛ս Пчелина, Армянские памятники, 243.

(ղեկավար՝ Սամվել Կարապետյան) վերստին կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ հիմնովին ավերվել է նաև Քարվաճառի հայկական եկեղեցին և պղծվել է խաչքարերով հին գերեզմանոցը: Եկեղեցու տեղում 1960-ականների սկզբին կառուցվում է պատմագավառագիտական թանգարան, որտեղ մինչև 1993 թ. ապրիլ ամիսը, այսինքն մինչև Քարվաճառի ազատագրումը 916 թ. հայագիր մի խաչքար, որ այստեղ է տեղափոխվել 1965 թ., ջանադրաբար ադրբեջանցիների կողմից ներկայացվել է որպես աղվանական ծագման խաչդաշ: Այդ խաչքարը, սակայն, հետագայում փոխադրվել է Գանձասարի վանք:¹⁴ Քարվաճառ գյուղի տարածքում բացի այս խաչքարից պահպանված պատմամշակութային հուշարձաններից հայտնի են նաև XIII-XVII դդ. տապանաքարեր և միջնադարյան ձիթհանի մեկ քար:¹⁵ Չնայած Քարվաճառ գյուղից մեզ հասած պատմական հուշարձանների և սկզբնաղբյուրների սակավությանը՝ հետագայում արդեն շրջանի կարգավիճակ ձեռք բերած Քարվաճառի վարչական տարածքի բնակատեղիներում կատարված հնագիտական ուսումնասիրությունների ժամանակ հայտնաբերված հուշարձանները փաստում են, որ գավառի տարածքը հայերով բնակեցված է եղել վաղնջական ժամանակներից: Այստեղ հայտնաբերված մ. թ. ա. IV-III հազարամյակներով թվագրվող ժայռապատկերներն իրենց պատկերագրությամբ, արվեստով և ոճական առանձնահատկություններով նման են հարևան Սյունիքի, Գեղամա և Վարդենիսի լեռներում պահպանված նմանատիպ հուշարձաններին, իսկ գավառի տարբեր բնակատեղիներում բազմաթիվ ու տարաբնույթ միջնադարյան հուշարձանները՝ եկեղեցիներ, մատուռներ, կամուրջներ, խաչքարեր, վկայում են, որ հայկականության հետքն այստեղ չի ընդատվել մինչև XVIII դ. առաջին քառորդի հայերի տեղահանումը: Քարվաճառը գավառի շատ գյուղերի հետ հայաթափվել է 1725 թ. հետո, ապա բավական երկար ժամանակ՝ մինչև XIX դարասկիբը, անմարդաբնակ մնալուց հետո ոչ միայն գյուղը, այլև ողջ գավառն աստիճանաբար բնակեցվել է այնտեղ ներթափանցած քրդական ծագմամբ մահմեդական խաչնարած ցեղերով: Մահմեդական ցեղախմբերի բնակեցմամբ Արցախում բնակվող միատարր ու միաձույլ հայության մեջ մտավ օտարասեռ էթնիկ տարրը: Հենց այդ ժամանակից էլ սկսվեց Արցախի նաև մյուս հայկական բնակավայրերի անվանումների օտարացումը: Օտարամուտ այդ ցեղախմբերն, իրենց լեզվահնչյունական համակարգի յուրահատկություններին հարմարեցնելով, Քարվաճառ տեղանունը սկսեցին անվանել Քյարվաջար, Քյալբաջար կամ Քելբաջար, իսկ ծար գավառը՝ ճարլու, Ջար կամ Ջարուզիբիլ (Ջարուզիվի):¹⁶ Այսպես էլ Աղահեճքը դարձավ Լաչին, Ջերմաջուրը՝ Իստիսու, Իգաձորը՝ Բադրլու, Երիցուշենը՝ Քեշիշքյանդ, Սևաջուրը՝ Ղարասու, Յրտնուտը՝ Սոյուղբուլաղ և այլն: Քարվաճառի շրջանում ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերվել են նաև

14 Կարապետյան, Հայ մշակույթի հուշարձանները, 52-54: Կարապետյան, Հայաստանի պատմություն, 386:

15 Ղահրամանյան, Տեղեկատու, 276:

16 ՀՀՊՊԱԱ, ֆ. 57, ց. 1, գ 4, թ. 1:

XIX-XX դդ. մահմեդական մշակույթի հուշարձաններ՝ քյումբազ կոչված գմբեթավոր դամբարաններ, ձիակերպ և խոյակերպ զերեզվանաքարեր, որոնք բացառապես վկայում են այդ ցեղերի ոչ բնիկ լինելու մասին:

Սիմեոն Երևանցի կաթողիկոսը (1710–1780) «Ջամբո» աշխատության մեջ թվարկում է Ճար գավառի մեջ մտնող մոտ երեք տասնյակ գյուղերի անուններ, որոնք, որպես Դադիվանքի կալվածքներ, ենթարկվում էին էջմիածնին:¹⁷ Այդ ցանկից բացակայում են Քարվաճառ և վիմագիր ու ձեռագիր արձանագրություններից հայտնի ևս մի քանի գյուղերի անունները, ինչը վկայում է այն մասին, որ XVIII-րդ դարում արդեն այդ գյուղերը հայաթափվել էին: Գավառը, բացառությամբ Խուլթավան գյուղի և եպիսկոպոսանիստ Դադիվանքի, ամբողջովին հայաթափվում է 1760-ական թվականներին: Արտագաղթած ծարեցիները բնակություն են հաստատում Վրաստանի տարբեր բնակավայրերում:

Ամփոփենք. Մեծ Հայքի Արցախ նահանգի Ճար գավառի նշանավոր գյուղերից էր Քարվաճառը, որը հայտնի էր նաև որպես գրչության կենտրոն: Քարվաճառից մեզ հասած միակ ձեռագիր մատյանը 1402 թ. Թումա Սյունեցու ընդօրինակած ձեռագիր մատյանն է, որի հիշատակարանը ունի պատմական և աղբյուրագիտական բացառիկ արժեք: Այստեղ առաջին անգամ հիշատակվում է Քարվաճառը՝ որպես Դադիվանքի ենթակայության տակ գտնող հայաբնակ գյուղ: Հիշատակարանը նաև եզակի և բացառիկ սկզբնաղբյուր է միջնադարում Քարվաճառ գյուղում գործած եկեղեցու վերաբերյալ, որը, սակայն, հիմնովին արվերվել է 1725 թ.-ից հետո, երբ գյուղը հայաթափվել է և բնակեցվել այստեղ ներթափանցած մահմեդական ցեղերով:

Գրականություն

Ադրբեջանի Հանրապետության պետական վիճակագրական կոմիտե, «Վարչական տարածքային բաժանման դասակարգում, 2019», պաշտոնական հրատարակություն, Բաքու 2020 / Azərbaycan Respublikasının Dövlət Statistika Komitəsi. «İnzibati ərazi bölgüsü təsnifatı, 2019», Rəsmi nəşr, Bakı 2020:

Երևանյան, Ս., Հայաստանը ըստ «Աշխարհագրոյց»-ի, Երևան 1963:

Երևանցի, Սիմեոն, Ջամբո, Գիրք, որ կոչի Յիշատակարան, Վաղարշապատ 1873:

Խաչիկյան, Լ., Մատթեոս Ջուղայեցու կյանքն ու մատենագրությունը, «Բանբեր Մատենադարանի», 1956, թ. 3:

Խորենացի, Մովսես, Աշխարհացոյց, տե՛ս Մատենագիրք Հայոց, հ. Բ, առաջաբանը՝ Պ. Մուրադեանի և Կ. Իսգանյանի, Անթիլիաս 2003:

Կարազյոզյան, Հ., Հակահայկական սեպը և նրա չորս շրջկենտրոնները, «Երկիր» օրաթերթ, 1994, թ. 131:

Կարապետյան, Ս., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանի բռնակցված շրջաններում, Երևան 1999:

Կարապետյան, Ս., Հայաստանի պատմություն. Մոավականք, հ. Դ, Երևան 2019:

Հակոբյան, Թ. / Մելիք-Բախշյան, Ստ. / Բարսեղյան, Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, Երևան 2001:

17 Սիմեոն Երևանցի, Ջամբո, 283:

ՀՀՊՊԱՍ, ֆ. 57, ց. 1, գ 4, թ. 4:

ՀՀՊՊԱՍ, ֆ. 468, ց. 2, գ 73, թ. 1:

ՀՀՊՊԱՍ, ֆ. 319, ց. 1, գ 5, թ. 23-28:

ՀՀՊՊԱՍ, ֆ. 57, ց. 1, գ 4, թ. 1:

Ղահրամանյան, Հ., Տեղեկատու Արցախի Հանրապետության վարչատարածքային միավորների սոցիալ-տնտեսական բնութագրերի, Երևան 2015:

Շահյաթունեանց, Հովհ., Ստորագրութիւնն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ, Էջմիածին 1842:

Ջալալեանց, Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հ. Ա, Տիփսիս 1842, հ. Բ, Տիփսիս 1858:

Սիմոնյան, Հ. / Սանամյան, Հ. / Գնունի, Ա., Արցախի և ազատագրված տարածքների 1990-2005 թթ. հնագիտական հետազոտությունների հիմնական արդյունքները, «Պատմամշակութային ժառանգություն մատենաշար», թ. 2, Երևան 2007:

Տեր-Մովսիսեան, Մ., Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծինի և Դադի եկեղեցիները և վանական շինությունները, Երուսաղեմ 1931:

Դիվան հայ վիճաբանության, Արցախ, պրակ V, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երևան 1982:

Пчелина Е., Армянские памятники на территории Азербайджанской ССР, Труды Отдела Востока Эрмитажа, т. 3, Ленинград 1940:

Հեղինակ

Թամարա Մինսայան, բան. գիտ. դր.

«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի ավագ գիտաշխատող, Արվեստի պատմության և զրչության կենտրոնների բաժին, Երևան, Հայաստան, minasyan.tamara64@mail.ru

Open Access

This paper is published under the Creative Commons Attribution-ShareAlike 4.0 International license (CC BY-SA 4.0). Please note that individual, appropriately marked parts of the paper may be excluded from the license mentioned or may be subject to other copyright conditions. If such third party material is not under the Creative Commons license, any copying, editing or public reproduction is only permitted with the prior consent of the respective copyright owner or on the basis of relevant legal authorization regulations.